

ԳԱՆԱՏԱՀԱՅ ՀԻՄՆԱԳՐԱՄԻ ՄԱՍԻՆ (ԳՀ)

Գանատահայ հիմնադրամը հիմնուեցաւ 1985-ին, խումբ մը նուիրատուներու կողմէ, Հայ Կեդրոնի նախաձեռնութեամբ: Պաշտօնական գրանցումը, որպէս բարեսիրական հաստատութիւն, կատարուեցաւ 1997-ին, Գանատայի Օնթարիօ նահանգի օրէնքներուն համաձայն: Անոր միակ նպատակն է, նիւթապէս օգնել գոյութիւն ունեցող գաղութային կազմակերպութիւններուն, որոնք կը նպաստեն գաղութի կրթական, առողջական, մշակութային եւ ընկերային կարիքներուն:

Ծրագիր եւ նպատակ

Գտնել նուիրատու անդամներ, շահարկել եւ հսկել ստեղծուած հիմնադրամներու եւ աւանդներու վրայ, եւ շահարկումէն գոյացած գումարին մէկ մասը կամ ամբողջութիւնը տրամադրել նուիրատուներու կողմէ ճշդուած բարեսիրական հաստատութիւններու: Մնայուն նիւթական աղբիւրներ պահովելով, սատարել Հայ Գաղութին ծառայող հաստատութիւններու նիւթականին ամրապնդման, երաշխաւորելու համար անոնց բարգաւաճ գործունէութիւնը:

Համարատուութիւն

ԳՀ-ն կը կառավարուի 9 հոգիոց ընտրովի եւ անվճար մարմնի մը կողմէ: Անոր հաշուետու յանձնախումբերու անդամները, որակեալ եւ անվճար կամաւորներ են: Խնամակալ մարմինը կ'ընտրուի ԳՀ-ի նուիրատու անդամներուն կողմէ, ԳՀ-ի եւ Հայ Կեդրոնի կողմէ միասնաբար առաջարկուած թեկնածուներու ցանկէն, երեք տարուան տեւողութեան համար:

ԳՀ-ի անդամները անոր նուիրատուներն են, հետեւաբար, Մարմինը ամբողջովին հաշուետու է հիմնադրամին նուիրատու անդամներուն: ԳՀ-ն կը շեշտէ նիւթական բացարձակ համարատուութիւն եւ հոգատար վերաբերմունք հիմնադրամի գումարներուն նկատմամբ: Նիւթական տեղեկագիրը ամէն տարի կը քննուի հաշուպահական ընկերութեան մը կողմէ եւ տրամադրելի է իր անդամներուն եւ հասարակութեան:

